

ԱԶԳԱՅՆԱԿԱՅՆԱԿԱՆ ԿՐԻՋԻՍԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Չը կայ աւելի սարսափելի սով, քան մարդկանց սովը։ Այդ պատճառով և ազգաբնակչութեան ելեէջները տնտեսագիտութեան ամենահիմնական պրօբլէմներից մէկն են կազմում։ Որքան թէօրիմներ, սրտայաւ հրահանգներ հրապարակ եկան՝ մարդկանց աճումը կամ նուազումը նպաստաւորելու համար... Ո՞վ չի ծանօթ աշխարհահռչակ Մալթուսի հետ, որի գրողածքի ամօթիւ ստեղծուած է այսօր ամբողջ գրականութիւն։

Բայց այս պրօբլէմը ոչ մի տեղ ներկայուած չէ գրուած այնքան սուր ու ստիպողական կերպարանքով, ինչպէս ժամանակակից Ֆրանսիայում։ Այդտեղ ազգաբնակչութեան կրիզիսը սօցիալական ամենածանր և ամենայայտնի խոցերից մէկն է։ Այդտեղ մալթուսիանիզմը սոսկալի աւերումներ է գործում։ Չննք ուզում ասել, թէ անդլիայի քահանայի տիտուր վարդապետութիւնը շատ տարածուած է Ֆրանսիայում։ Ամենեւին! Բայց իսասոր կատարում է անկախ վարդապետութիւնից։ Միջին ֆրանսիացին մալթուսական է, առանց Մալթուսին ճանաչելու։

Ինչէր չեն ասում ձեզ Զօլայի հոյակապ գործի («Բեղմնաւորութիւն») էջերը... Այդ Սերաֆիններն ու Սեգենները, որոնք ոճրագործ թեթեւամտութեամբ ներբողում են ամուլութիւնը։ Այդ Բօլէնները, որոնք ներսում չբեքբութիւն են քարոզում, դրսում բազմացնում են իրանց անտուն, անտէրունջ սերունդը, այդ անհողի անատօմիստները, որոնք իրանց դժոխային լարօրատօրիաներում կտրատում են մօր արգանդի մէջ հասունացած պտուղը. այդ լէզիօնները՝ փողոց չպրտուած ապօրինի զաւակներ, որոնք իրանց առաջին օրերից բախտի հարուածներին մատնուելով՝ բնաջինջ են լինում հարիւրներով ու հազարներով, կամ թէ նետում են պառուպերիզմի, ողբերգական թշուառութեան անդունդը։

Ազգաբնակչության պրոբլեմը՝ կնճռոտ, անլուծելի՝ զբաղեցրել է մարդկանց բոլոր էպոխաներում: Ամենահին ժամանակներից սկսած՝ փիլիսոփաներ և տնտեսագետներ այն կարծիքն են դառնել, որ ազգաբնակչությունը հակումն ունի անսահմանորեն աճելու, մինչդեռ ապրուստի միջոցների աճումը ունի իր սահմանները: Եւ այդ թեղիսից մեկնելով՝ խորհուրդ են տուել միջոցներ ձեռք առնել՝ մարդկանց բեղմնավորման ոյժը սահմանափակելու համար:

Պլատոն ու Արիստոտել հին ժամանակներում, Միքաբո և ուրիշները 18-րդ դարում, Մալթուս ու Ստիւարտ Միլը 19-րդ դարում՝ այս հիմնական մտքի պաշտպաններ են եղել:

Դեռ 1865-ին ֆրանսիական «Journal des Economistes» յայտնի օրգանը ճգնում էր ապացուցանել, որ մարդկանց բազմացումը թշուառություն մի աղբյուր է և որ նրա սահմանափակումը անհրաժեշտ է ժողովրդի բարգաւաճման ու բարոյացման համար:

Այդ թեղիսի ամենորոշ ձեւակերպոյն էր անգլիացի Մալթուս: Նա հրապարակ եկաւ մի համարձակ և օրիգինալ յայտարարություն: Մարդիկ, ասաց նա, աճում են գեոմետրիական պրոգրեսսիայով (1, 2, 4, 8, 16, 32, 64...)—մինչդեռ ապրուստի միջոցները աճում են թուաբանական պրոգրեսսիայով (1, 3, 5, 7, 9, 11, 13...):

Եւ տրամաբանեց Մալթուս, որ մարդկանց այդ անվերջ բեղմնավորությունը սահման դնելու համար գոյություն ունեն և անհրաժեշտ են պատերազմները, համաճարակ ախտերը և կանխարգել միջոցները (moyens preventifs)... Վերջին դարմանը Մալթուս յանձնարարում է բանուոր դասակարգին. այդտեղ է նրա թէօրիայի դաժան հանգամանքը: «Եթէ հարուստ ես, արտագրիր և վայելիր. եթէ աղքատ ես՝ զսպիր կրքերդ, սահման դիր բեղմնավորություն»...

Բարեբախտաբար, փորձը չարդարացրեց Մալթուսին: Գիտություն, խոշոր մեքենայական արդիւնաբերություն պրոգրեսի հետ՝ օգը ցնդեցին նրա պաշտպանած թեղիքները: Փորձը ցոյց տուեց ընդհակառակը, որ անսահման է ապրուստի միջոցների ամբարումը, այն ինչ՝ ազգաբնակչության բեղմնավորումը ունի սահմաններ:

Քիմիան իր հսկայական սինթեզներով ապացուցեց, որ մենք բնաւ վախ չենք կարող ունենալ կենսական պաշարի սպառելու: Հասարակական գիտությունն էլ յայտարարեց միւս կողմից, որ մարդկային բեղմնավորման ոյժը յարածուն չէ, այլ

որ մարդկութիւնը՝ իմացականութեան ճանապարհի վրայ միշտ աւելի առաջադրմելով՝ հետզհետէ նուազում է նրա մէջ սեռական մղումը, ապա ուրեմն և անեցողութեան ոյժը:

Միւս կողմից, եթէ պատերազմը և համաճարակ ախտերը յաճախ աւերումներ են գործում, ապա չը պէտք է մոռանալ, որ կայ և փոխարինութեան օրէնքը (loi de compensation), որի շնորհիւ պատուհասները անյնեւուց յետոյ՝ չուտով լցւում է նրանց առաջացրած պարսպը:

Վերջապէս—խօսելով դարձեալ բիօլոգիական լեզուով— ծննդագործութեան բնազդի հետ (instinct de reproduction) կայ նաև պահպանութեան բնազդը (instinct de conservation), որ ստիպում է մարդկային ցեղին նորանոր միջոցներ վնասել իր գոյութիւնը ապահովելու համար:

Այս բնդհանուր խորհրդածութիւններից յետոյ դառնանք Ֆրանսիային: Երկար ժամանակ մալթուսականութիւնը հմայել էր այդ երկրի մտածողներին: Այժմ նկատուում է հակամալթուսական մի ուժեղ հոսանք, որին սատար է հանդիսանում ինքը Ֆրանսիական պետութիւնը: Ազգաբնակչական կրիզիսը այդտեղ առաջնակարգ խնդիր է: Կենդանի վիճաբանութիւնների առարկայ է նա պարլամենտի մէջ, բազմաթիւ ընկերութիւնների կօնգրէսներում, նոյն իսկ ակադէմիաներում. Ֆրանսիան սպառնում է—այս է տխուր նշանախօսքը: Փնտրւում են «դարմաններ»՝ սոսկալի պատուհասի առաջն առնելու, կամ գէթ մեղմելու:

Հարկւր տարուայ ընթացքում՝ 19-րդ դարի սկզբից մինչև վերջը՝ Ֆրանսիայի ազգաբնակչութիւնը 26 միլիօնից հասել է 38 միլիօնի միայն, մինչդեռ Անգլիայում—զաղուծները չը հաշուելով—ազգաբնակչութիւնը այդ նոյն ժամանակամիջոցում 12 միլիօնից բարձրացել է 41-ի, իսկ Գերմանիայում 15 միլիօնից 50 միլիօնի:

1872-ին Գերմանիայի ազգաբնակչութիւնը չորս միլիօնով միայն աւելի էր Ֆրանսիացիներից, այսօր նա ամբողջ 17 միլիօնով աւելի է, այն ևս գրեթէ հաւասար տարածութեան վրայ: Գերմանացիների այդ սրընթաց աճումը բացատրւում է միմիայն այն հանգամանքով, որ ծնողների թիւը անհամեմատ աւելի է, քան մեռողներինը, որովհետև բնդհանուր առմամբ պանդխտութեան հոսանքը (émigration) աւելի մեծ է, քան ներգաղթումը (immigration):

Գերմանիայի ազգաբնակչանութիւնը կրկնապատկւում է 50 տարում, Անգլիայինը—մօտ 83 տարում, Ֆրանսիայինը—169 տարում!

Ազգաբնակչութեան կրիզիսը Ֆրանսիայում ունի բազմաթիւ և բազմակողմանի պատճառներ: Հարկային սիստեմ, միլիտարիզմ, ընտանեկան կապերի քայքայում, և սանձարձակ պրօստիտուցիա, որդեսպանութիւն, ալկօհօլիզմ, ֆիզիկական ու հոգեկան այրասեռումն եայլն եայլն—անա պատճառներ, որոնց չնորհիւ Ֆրանսիան այսօր վերջին տեղն է բռնում մարդածնութեան (natalité) տեսակէտից՝ քաղաքակրթուած երկրների շարքում:

Դուք կ'ասէք, ընթերցող, որ այդ ողբալի երեոյթները յատուկ են բոլոր քաղաքակրթ երկրներին: Այդպէս է, անշուշտ: Դրանք ժամանակակից լուսաւորութեան ստուերներն են, և չէ թէ միայն ազգաբնակչութիւնը, այլ եւրոպական համայն պրօգրէսը, թունաւորուած է նրանց գոյութեամբ: «Ստուերները» ամեն տեղ կան, անշուշտ, բայց Ֆրանսիայի մէջ՝ աւելի քան ուրիշ երկրներում: Աստիճանի մէջ է խնդիրը, Մէկ էլ՝ չարիքների զուգադիպութեան մէջ: Միլիտարիզմի յոռի սիստեմը ծաղկում է նաև հարևան Գերմանիայում, բայց այնտեղ չը կայ—այնքան հրէշային ծաւալով—պրօստիտուցիան, որդեսպանութիւնը և կամաւոր ամուլութիւնը: Ալկօհօլիզմը սոսկալի աւերածներ է անում և Շվէյցարիայում, այնուամենայնիւ ազգաբնակչութիւնը բարգաւաճում է այստեղ, որովհետև կօնեակի և արսենթի հետ չեն գործում ուրիշ պատուհաններ:

Մարդածնութեան նուազումը քանի զնում, աւելի է չեղւում Ֆրանսիայում: Չափազանց շատ են այդտեղ անդաւակ ընտանիքներ, չափազանց շատ են նաև այնպիսի ընտանիքներ, որոնք ունեն մէկ կամ երկու զաւակ միայն: Վերջին տարիներում կատարուած մի մարդահամար ցոյց է տալիս, որ Ֆրանսիական 10,425,000 ընտանիքներից 2,000,000-ը (ուրեմն 20%-ը) չունեն զաւակներ: 2,500,000-ը (24%-ը) ունեն միայն մէկ կենդանի զաւակ. 2,265,000-ը (22%-ը)—երկու կենդանի զաւակ. 1,500,000-ը (15%-ը)—երեք կենդանի զաւակ. 930,000-ը (9%-ը)—չորս. 550,000-ը (5%-ը)—հինգ. 313,000-ը (3%-ը)—վեց. և 230,000-ը միայն (2%-ը) ունեն եօթ կենդանի զաւակ:

Վերջին 20 տարում գլխաւոր երկրների պաշտօնական վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ՝

Ունդաբիայում 1000 բնակիչների վրայ գալիս են տարեկան 43 ծնունդ, Գերմանիայում—39, Աւստրիայում—34,4, Իտալիայում 36,8, Անգլիայում—35,1, Ֆրանսիայում—25,3!

Միջին թուով մէկ ամուսնութիւնից ծնւում են՝ Ռուսաս-

տանում—4,5 երեխայ, Ունդարիայում—3,93, Ֆրանսիայում—3!
Այդ միջինը հետզհետե իջնում է...

Զարմանալի չէ, որ Ֆրանսիայի տնտեսագէտները այնքան անհանգիստ զարկում են ահալոյնակը... Ֆրանսիացիք քիչ են ամուսնանում, իսկ ամուսնացողներն էլ կամովին դատապարտում են իրանց ամուլութեանը Զին ամուսնանում՝ այն պատճառով, որ կամ չեն ուզում կամ թէ չեն կարող ամուսնանալ:

Աղքատ չըջաններում ապրուստի հոգան է պաշարում մարդկանց, զոռչաւորութեան, չըջահայեցութեան նկատումներն են դեր խաղում, իսկ հարուստ չըջաններում՝ ազատ և չուլ կեանքի հրապոյն է արգելք լինում ամուսնութիւններին:

Գիւղացին, գործաւորը մալթուսական են ակամայ, տնտեսական անհրաժեշտութիւնից դրդուած. բուրժուան մալթուսական է՝ իր յօժար կամքով:

Տնտեսական անհրաժեշտութեան լուծը խիստ ծանր է գալիս ժամանակակից աշխատաւոր Ֆրանսիային: Հարկային սխտեմը ունի ողբալի տարկանոնութիւններ: Անուղղակի հարկերը, այն ևս կենսական անհրաժեշտագոյն պիտոյքների վրայ՝ (միս, աղ, նաւթ, շաքար, մի քանի խմիչքներ և այլն) դեռ զոյրութիւն ունեն Ֆրանսիայում, թէև վաղուց դատապարտուած տնտեսագէտներից: Ծանր են ազդում նրանք աշխատաւորի կացութեան վրայ: Նա հարկ է վճարում ոչ թէ համեմատ իր կարողութեան կամ եկամուտին, այլ համեմատ իր պահանջներին:

Նկատեցէք, որ սպառող ազգաբնակչութեան ահագին մեծամասնութիւնը կազմող լեզիճնները ուրիշ սեփականութիւն չունեն, բայց եթէ միայն իրանց օրուայ աշխատանքի արդիւնքը: Դա հասարակութիւնների «երկաթէ օրէնքն» է... երեւակայեցէք մանաւանդ բանուորի դրութիւնը ակամայ անաշխատութեան օրերում...

Այն ժամանակ, երբ միւս քաղաքակիրթ երկիրները ճիգ են թափում ոչնչացնելու հարկային այդ աղետաբեր սխտեմը (Անգլիայում այդ աշխատանքը սկսուած է 60 տարուց ի վեր, և այսօր այնտեղ չը կայ ոչ մի հարկ «առաջնակարգ անհրաժեշտութեան» պէտքերի վրայ),—Ֆրանսիան՝ չը նայած այնքան թռիչքներին ու յեղաշրջումներին՝ տարօրինակ յետամնացութեան ապագայցիներ է առլիս այդ տեսակէտից:

Ամեն տարի Ֆրանսիական բիւջէի հարիւրաւոր միլիոնները դոյանում են այդ տեսակի տուրքերից:

Այդպիսով զարմանալի չէ, որ ամուսնութիւնները և բազմ-

անդամ ընտանիքները շատ էլ չեն հրապուրում ֆրանսիացի միջին աշխատատերին:

Միևտարի դեռ իր ծայրայեղութիւններով մի ուրիշ խոչընդոտ է այդտեղ մարդածնութեան, ուրեմն և ազգաբնակչութեան ամսան համար: Ֆրանսիան իր ողբերգական թուականներից ի վեր ստիպուած է մեծ, իր ուժերից վեր զոհողութիւններ անել միևտարի դեռ անկուշտ Մոզոքին: Նա ստիպուած է իր 38 միլիոն ազգաբնակչութեամբ ելթէ ոչ աւելի, գէթ նոյնքան փնայուն, կանոնաւոր զօրք պահել, որքան Գերմանիան իր 50 միլիոն բնակիչներով:

Ֆրանսիական երիտասարդութեան ծաղիկը թառամում է զինուորական պարտադիր ու երկարատև ծառայութեան մէջ: Զինուոր են գնում այնպիսի մի ժամանակ, ամուրիութեան են դատապարտւում այնպիսի մի հասակում, երբ չափազանց ծանր է տանել այդ լուծը: Զօրանոցների կեանքը փճացնում է նրանց անկանոն միաւորումները դառնում են սովորութիւն, երկրորդ բնութիւն: Երիտասարդը կորցնում է, այսպէս ասած, ընտանիքի ճաշակը. զօրանոցից ազատուելուց յետոյ էլ չի մտածում ամուսնանալու մասին: Աղատ, սանձարձակ կեանքի ցանկութիւնը մեծ կենտրոններից մտնում է և գիւղերը...

Յիշենք մարդածնութեան արգելքների շարքում և պրոսթիտուցիան, որ քաղաքակրթութեան աշխարհում դարձել է, ըստ Բերէլի, նոյնքան անհրաժեշտ մի հաստատութիւն, որքան եկեղեցին:

Դարձեալ, անշուշտ, մի համատարած երեւոյթ: Բայց նա Ֆրանսիայում իր առանձնայատուկ բնաւորութիւնն ունի: Պրոստիտուցիա, ամուլութիւն, որդեւպանութիւն, ապօրինի դաւակների լէգիոններ և զարհուրելի մահացութիւն... Ահա մի ամբողջ իրարու չաղկապուած պատուհասներ, որոնք վարակում են ֆրանսիական հասարակութեան բոլոր խաւերը, թուլացնում են մարդասպանութիւնը և դէպի կորուստ են մղում զիւցազնական թռիչքների պանծալի հայրենիքը...

Պրոստիտուցիայի են ենթարկւում թէ աղքատը և թէ հարուստը: Համաշխարհային կենտրոն Պարիզի հարիւր հազարաւոր պրոստիտուտուհիները առաջ են գալիս ոչ միայն մայրաքաղաքի ապականուած մթնոլորտից, այլ և զաւառներից: Պառան Դիւշատլէ, Պարիզեան պրոստիտուցիայի մանրազննին ուսումնասիրողը, փաստերով վկայում է, որ 1000 պրոստիտուտուհիներից հազիւ 6-ը միայն երեխայ են ունենում տարուայ ընթացքում: Եւ խիստ սակաւ է պատահում, որ ծնունդը աջող լինի: Ծնուած երեխաները սովորաբար լինում են անկենդան:

Սարսափելի է մտածել մանաւանդ դաղտնի պրօստիտուցիայի մասին (La prostitution clandestine), որ կատարւում է մութ ու աղտոտ խորշերում, հեռու ոստիկանական հսկողութիւնից: Որքան քստմնելի ոճիւրներ, որքան վաղաժամ զոհուած ջահէլ կեանքեր... անկօնորօլ պրօստիտուցիայի շնորհիւ է, որ տարածւում է ազգաբնակչութեան բոլոր խաւերում սիֆիլիսի համաճարակը, որ միայն անբաժնի ուրիշ անօրինակ հետ՝ հնձում է Ծրանսիայի երիտասարդ ոյժերը, թունաւորում է ամբողջ սերունդներ...

Այդպէս անհաշիւ են ազգաբնակչական կրիզիսի պատճառները Ծրանսիայում: Պերսպեկտիւր չափազանց մոայլ է նկարւում սրտայայտ ֆրանսիացիներին: Առաջարկւում են այլ և այլ «դարմաններ», ումանք՝ ազդու, արմատական, ուրիշները միայն պալլիտատիւ միջոցներ: Պէտք է ըստ կարելոյն նուազեցնել մահացութիւնը, որ հնձում է առանձնապէս խեղճ ու անտէր, փողոց ձգուած «ապօրինի» երեխաներին: Պէտք է միւս կողմից զարկ տալ մարդաժնութեան: Ահա ծանր ու կոնկրետ պրօբլեմներ, որոնք որոճւում են շարունակ, բայց գոհացուցիչ լուծման երբէք չեն յանդում:

Արմատական կուսակցութիւնները առաջարկւում են, ի հարկէ, ամենաազդու միջոցները, անհրաժեշտ է բարձրացնել ժողովրդի բարեկեցութիւնը, նրա սպառողական կարողութիւնը, յեղաշրջել հարկային սիստեմը, իսպառ վերացնելով անուղղակի հարկերը և սահմանելով պրօգրէսսիւ հարկեր, մեղմացնել միլիտարիզմի չարիքը, պակսեցնելով ծառայութեան ժամանակը, վերջացնել ամուսնութեան հետ կապուած հազար ու մի խոչընդոտ-ձեւականութիւնները, կազմակերպել ընդարձակ բժշկական օգնութիւն լքուած օրինաւոր ու «ապօրինի» ծնունդներին համար նայլն նայլն:

Պալլիտատիւներ—առժամայ անբաւարար դարմաններ—առաջարկւում են բուրժուազական օպպօրտիւնիստ կուսակցութիւնները: Նրանք խորհուրդ են տալիս, օրինակ, հարկ դնել ամուսինների վրայ, որոնք ամուսնի են մնում առանց յարգելի պատճառների, քչացնել այն ծնողների հարկը, որոնք աշխարհ կը բերեն որոշ թուով երեխաներ, ազատել բոլորովին հարկատուութիւնից այն ընտանիքները, որոնք եօթ գաւակ կ'ունենան... Եւ նման ուրիշ պալլիտատիւներ:

Չենք կարող պնդել, ի հարկէ, որ այդ միջոցները միանգամայն ապարդիւն են: Տարիներ առաջ պարլամենտի մի քանի անդամների առաջարկութեամբ կառավարութիւնը որոշեց պե-

տական գանձարանից թօշակ նշանակել՝ ընտանիքի եօթերորդ զաւակին, փորձը աջողուեց. կարճ ժամանակում թօշակաւորները—ապա ուրեմն և եօթ զաւակ ունեցող ընտանիքների թիւը այնքան մեծացաւ, որ պետութիւնը հարկ սեպեց հրաժարուել իր ֆինանսների համար վտանգաւոր այդ փորձից:

Յրանսիական կառավարութիւնը հիմնական ընթացքներ ինքրում մինչև օրս ընդհարնապէս եղել է արձագանք օպպօրտիւնիստ կուսակցութեան տրամադրութիւնների: Վերջին ընտրութիւններից յետոյ պարլամենտի տէրն է արմատական մեծամասնութիւնը, որ, անտարակոյս, կը ստիպէ նոր կառավարութեան՝ իրական միջոցներ ձեռք առնել մասսաների բարօրութեան ու կանոնաւոր համան համար:

ՄԻՔ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ